ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար օդորակիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/02 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի օգոստոսի 18-ին կնքված N ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/02 պայմանագրում 2017 թվականի սեպտեմբերի 15-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ Պայմանագիրը կնքվել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հատկանիշներով:

Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման համար նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի N2 հավելվածը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝ Պայմանագրի 3.11, 8.5 և 8.13 կետեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգման բաժին:

Հեռախոս՝ 010-511-788, 010-511-787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
18.08.2017թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
N ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/02 ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «15» սեպտեմբերի 2017թ.

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ն, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պայմանները, և հիմք ընդունելով 18.08.2017թ. կնքված N ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/02 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 3.1.1, 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝ կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ	***«Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Թումանյան 12
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 02584502
Հ/Հ՝ 900011192052	Հ/Հ՝ 205002227796
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն Ա. Հովհաննիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
18.08.2017թ. կնքված N ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/02 պայմանագրի
<<15>> սեպտեմբերի 2017թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

ՀՀ	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում				
		սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	**Օդորակիչներ**	1072500	2145000	3217500	4290000	**4290000**

ԳՆՈՐԴ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192052
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Տնօրեն՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Թումանյան 12
ՀՎՀՀ՝ 02584502
Հ/Հ՝ 205002227796
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն Ա. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ.